ՏԱՇԻՐԻ ՍՐԱՀԱՎՈՐ ՄԻԱՆԱՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Վաղ միջնադարի միանավ եկեղեցիները հայ ճարտարապետության հետաքրքրական և կարևոր հուշարձաններից են։ Սակայն դրանք (հատկապես արտաքին սրահ ունեցողները), ի տարբերություն Հայաստանի բազիլիկ և գմբեթավոր կառուցվածքների, համեմատաբար քիչ են ուսումնասիրված։ Մասնագիտական գրականության մեջ վերջիններս ներկայացվում են մեկ-երկու օրինակով միայն (Գառնի, Թանահատ, Դվին), որոնք, իհարկե, չեն տալիս հայ ճարտարապետական հուշարձանների այս կարևոր ենթատիպի զարգացման լրիվ պատկերը։

1973 թ. ամռանը ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտարշավի ընթացքում Ստեփանավանի շրջանում ուսումնասիրվեցին արտաքին սրահով մի խումբ միանավ եկեղեցիներ, որոնք բացառիկ արժեքավոր են վաղ միջնադարի հայ ճարտարապետության պատմության համար։ Հորինվածքով և կառուցման ժամանակաշրջանով այդ խմբին է պատկանում նաև Օձունի միանավ եկեղեցին։ Օձունի և Ստեփանավանի շրջանի միանավ հուշարձանների միջև եղած այս ընդհանրությունը պատահական չէ, քանի որ թե՛ Ստեփանավանի շրջանը և թե՛ Թումանյանի շրջանի հարավային մասը, որտեղ գտնվում է Օձուն ավանը, վաղ միջնադարում մտնում էին պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մեջ, որի կենտրոնը եղել է Օձունը[1]։

Օձունի Սիրանավոր Ծազկավանք կոչվող միանավ եկեղեցին (նկ. 1) միշտ գտնվել է իր հռչակավոր հարևանի՝ Օձունի գմբեթավոր բազիլիկայի ստվերում և չի արժանացել մասնագիտական ուսումնասիրության։ Այն միայն հիշատակվել և համառոտ նկարագրվել է որոշ աշխատանքներում[2]։

Եկեղեցին գտնվում է Օձուն գյուղի արևելյան մասում։ Հուշարձանը համեմատաբար մեծ չէ (արտաքին չափերն են 8,23×11,90 մ), հատակագիծը ուղղանկյուն է, կազմված երկու անհավասար մասից՝ աղոթասրահից և հյուսիսային կողմին կից սյունասրահից։ Ծածկը, հարավային ու արևմտյան պատերը, սյունասրահի կեսը քանդված են։ Եկեղեցին հիմնականում կառուցված է մաքուր տաշած մուգ-կապտավուն բազալտից ու որձաքարից, իսկ որոշ կառուցվածքային տարրեր իրականացված են դեղնակարմրագույն ֆելզիտից։ Աղոթասրահը արևելքից-արևմուտք ձգված թաղակապ դահլիճ է (ներսի չափերն են 3,46×8,23 մ). հատակագծում թեթևակի պայտաձև աբսիդով։ Վերջինիս կամարը, որը հենվում է պարզունակ տրամատով իմպոստների վրա, շարված է դեղնավուն ֆելզիտի մաքուր տաշած խոշոր քարերից և ունի շեշտված պայտաձև ուրվագիծ։ Բեմի հատակը աղոթասրահի հատակից բարձր չէ՝ մի հատ-

---

1 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 75։

2 Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1952, էջ 38։

կանիշ, որը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարի բոլոր եկեղեցիներին (այդպես է նաև Տաշիրի սրահավոր մյուս հուշարձաններում)։ Աղոթասրահի (սա թաղակիր կամարներ չի ունեցել) բարձրությունը գերազանցում է լայնությանը մոտ երկու անգամ։ Ունեցե՞լ է եկեղեցին արդյոք մուտքեր հարավից և արևմուտքից, դժվար է ասել (այդ հարցին կարելի է պատասխանել մասնակի պեղումներից հետո միայն)։ Դահլիճի հյուսիսային պատում պահպանվել են երկու մուտք, որոնք բացվում են դեպի սյունասրահը։ Մուտքերից արևելյանը ուղղանկյուն բացվածք է, ծածկված միակտոր քարե բարավորով, իսկ արևմտյանը ավելի մեծ է և ավարտվում է ֆելզիտից իրականացված պայտաձև կամարով։ Սյունասրահը արևելքից ավարտվում է հատակագծում կիսաշրջանաձև աբսիդով, որը դեպի դուրս լուսամուտ չունի և արևելքից կառուցվածքի ողջ հորինվածքի հետ օրգանական ամբողջություն է կազմում։ Եկեղեցու երկաստի-

Նկ. 1. Օձունի Սիրանավոր Սաղկավանքը հյուսիս-արևմուտքից։

ճան որմնախարիսխը ձգվում է հուշարձանի հարավ-արևելյան անկյունից մինչև հյուսիս-արևելյանը, աղոթասրահն ու արտաքին աբսիդը բարձրանում են այս ընդհանուր որմնախարիսխի վրա։

Կամարասրահից պահպանվել են արևելյան կողմի առաջին կամարը և երկրորդի կեսը, որոնք պայտաձև են։ Հետագայում հուշարձանի այս մասը վերակառուցվել է՝ սրահի աբսիդի դիմաց ավելացվել է քառակուսի հատակագծով մի սենյակ, սրա հյուսիսային պատի շարվածքի մեջ են ներառվել սյունասրահի առաջին երկու կամարները։ Սենյակը, որի դուռը արևմուտքից է, իսկ միակ լուսամուտը՝ հյուսիսից, ծածկված է խաչվող թաղերով։ Ծածկի մշակման այս եղանակը և լուսամուտի չափերն ու պարակալը բնորոշ են XII—XIII դդ. հայ ճարտարապետությանը։

Պահպանված միակ կամարը հնարավորություն է ընձեռում վերականգնելու սյունասրահի նախնական տեսքը. այն եղել է եռակամար, երկու առանձին

կանգնած և երկու կիսասյուներով։ Հուշարձանի հյուսիս-արևելյան մասի հետազոտությունը ցույց է տալիս, որ կամարասրահի վերակառուցման ընթացքում վերջինիս ծածկը բարձրացվել է, որի հետևանքով այն կազմել է աղոթասրահի երկթեք տանիքի հյուսիսային լանջի շարունակությունը։ Սրահի սկզբնական ծածկի ավելի ցածր լինելու փաստը հավաստվում է նաև եկեղեցու հյուսիսային պատի մեջ պահպանված, միևնույն գծի վրա գտնվող քարե պահունակներով։ Այժմ դրանք շարվածքից պոկված են, սակայն 1946 թ., երբ հուշարձանն առաջին անգամ չափագրվել է (Հ. Հակոբյան), պահունակներից երկուսը դեռ իրենց տեղում են եղել։ Պահունակների առկայությունը ապացուցում է, որ սյունասրահի ծածկը եղել է միաթեք, փայտից։

Կառուցվածքի արտաքին արտահայտչականությունը հիմնականում արտահայտվում է հյուսիսային ճակատով։ Այն երկաստիճան հորինվածք ունի. առաջինը՝ ավելի ցածրը, ողջ ճակատի երկարությամբ ձգված կամարասրահն էր, որի ետևում բարձրանում է աղոթասրահի ավելի բարձր ծավալը՝ երկթեք ծածկով։ Կամարասրահի պայտաձև երեք կամարները տեղադրված են ճակատի միջին առանցքին սիմետրիկ։ Եկեղեցու դուռը բացվում է միջին կամարի առանցքով, իսկ աղոթասրահից դեպի կամարասրահը տանող կամարակապ մեծ բացվածքը քողարկված է վերջինիս պատի արևմտյան հատվածով։ Հուշարձանի ծավալատարածական նման լուծումը ողջ կառուցվածքին տալիս է հավասարակշռված և կայուն տեսք։

Օձունի միանավ եկեղեցին աչքի է ընկնում ճարտարապետական զուսպ ձևերով, դեկորի բացակայությամբ։ Հարդարանքի միակ տարրը քիվն է եղել, որից պահպանվել է անկյունի քարը։ Քիվը մշակված է պայտաձև կամարիկների շարքով, բավական խոր քանդակված, որին հաջորդում է միմյանցից մեկ եռանկյունու չափ շեղված եռանկյունիների երկու շարք։ Պայտաձև կամարիկների քիվ ունեն Հայաստանի մի շարք հուշարձաններ՝ Օձունի գմբեթավոր բազիլիկան, Մաստարայի, Գառնահովտի, Պտղնիի տաճարները (VI դ. վերջ). Մրենի, Շենիկի, Բջնիի ս. Սարգիս եկեղեցիները (VII դ.)։ Նմանատիպ քիվերի հետ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Օձունի Միրանավոր Աղկավանքի միանավ եկեղեցու քիվն այդ տիպի հնագույն օրինակներից մեկն է (շեշտված պայտաձևություն, կամարիկների մեծ խորություն, լայն միջանկյալ բաժանումներ, ռիթմիկ շարքի ընդգծում, որը ստացվում է ոչ միայն առանձին տարրերի կրկնությամբ, այլև եռանկյունիների երկշարք զարդագոտու միջոցով)։ Ինչպես իր ողջ հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով, այնպես էլ ճարտարապետական ձևերով և շինարարական տեխնիկայով քննվող հուշարձանը պատկանում է հայ ճարտարապետության վաղ շրջանին։ Հենց միայն արտաքին սրահում սյուների առկայությունը, որպես առանձին կանգնած կառուցվածքային տարր, վաղ թվագրման ապացույց է[3]։

Հարդարանքից պահպանված միակ տարրը՝ քիվը հնարավորություն է տալիս ավելի որոշակի թվագրել այս հուշարձանը։ Հայ ճարտարապետական հուշարձաններում կամարիկներով քիվ հանդիպում է սկսած VI դ. և լայն տա-

---

[3] Josef Strzygowski, Die Baukunst der Armenier und Eoropa, Wien, 1918, Band I, p. 86. Այստեղ և հետագայում օգտվել ենք ռուսերեն անտիպ թարգմանությունից, որի օրինակը պահպանվել է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում (այսուհետև՝ Ստրժիգովսկի)։

բածում է ստանում VII դ. սկզբում[4]։ Հետևաբար, Օձունի միանավ եկեղեցին կարելի է կառուցված համարել VI դ.՝ մի թվագրում, որը համապատասխանում է նրա ճարտարապետական բոլոր առանձնահատկություններին։

Պատմական Տաշիրի արտաքին սրահով, միանավ հուշարձանների մեծ մասը գտնվում է Ստեփանավանի շրջանում։ Ընդամենը տասը կամ շառավղով պարփակված տարածության վրա կանգուն են վաղ միջնադարի վեց հուշարձաններ, որոնք մեզ են հասել տարբեր վիճակներով։ Հոբարձիի և Սվերդլովի ս. Գևորգ եկեղեցիները XIX դ. հիմնովին վերակառուցվել են, Գյուլագարակի Տորմակ եկեղեցին կիսավեր է, իսկ Կուրթանի և Վարդաբլուրի Ջգրաշեն եկեղեցիներն ու Գտեվանքը, ճիշտ է, որոշ չափով վնասված են, սակայն պահպանում են իրենց թե՛ նախնական հորինվածքը և թե՛ հարդարանքի մեծ մասը։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ հուշարձանների ոչ միայն ժամանակագրական կապը, այլև հորինվածքի և ձևերի նմանությունը։ Կուրթանը, Ջգրաշենը և Գտեվանքը միանգամայն անհայտ են մինչ այժմ եղած մասնագիտական գրականության մեջ, իսկ Հոբարձիի, Գյուլագարակի և Սվերդլովի եկեղեցիները հիշատակվում են Ա. Սահինյանի և իտալացի ճարտարապետ Պաոլո Կունեոյի աշխատություններում[5]։

Գյուլագարակի Տորմակ, Հոբարձիի, Գտեվանքի, Ջգրաշենի, Կուրթանի եկեղեցիները գտնվում են միմյանցից 3—4 կմ հեռավորության վրա։ Տարածքային մոտիկությունը նպաստել է, որ շինարարական միևնույն ժամանակաշրջանին պատկանող այդ հուշարձանները միմյանց նման լինեն նաև ճարտարապետական ձևերով։ Սակայն միաժամանակ դրանցից յուրաքանչյուրն ունի կառուցող ճարտարապետի անհատականությամբ պայմանավորված առանձնահատկություններ։ Գտեվանքի, Կուրթանի, Գյուլագարակի եկեղեցիներն ունեն նույն ճարտարապետական հորինվածքը։ Դրանցից ամենալավ պահպանվածը Կուրթանի միանավ եկեղեցին է, որը հնարավորություն է տալիս պարզելու ավերված կամ վերակառուցված մյուս երկու հուշարձանների ճարտարապետության նախնական ձևերը։

Կուրթանի եկեղեցին (նկ. 2) գտնվում է գյուղի մեջ, հարթ տարածության վրա։ Նրա արևմտյան կողմում XIX դ. կառուցված զանգակատունը, ինչպես նաև հարավային կողմում գտնվող գերեզմանաքարերը վկայում են, որ եկեղեցին վաղ միջնադարից մինչև XIX դ. գործել է, անաղարտ պահպանելով հուշարձանի հորինվածքը։ Մասամբ վերանորոգվել են միայն հյուսիսային պատը և տանիքը, որի հետևանքով փոխվել են հյուսիսային և հարավային ճակատների սկզբնական քիվերը։ Հուշարձանի հորինվածքը բաղկացած է արևելյան կողմում կիսաշրջանաձև հատակագծով և պայտաձև կամարով բեմի աբսիդով ավարտվող աղոթասրահից (5,25×12,80 մ) և եկեղեցու հարավ-արևելյան կողմում գտնվող քառակուսի հատակագծով ավանդատնից[6]։ Վերջինս ծածկված է խաչվող թաղերով, արևելյան կողմերում ունի կանոնավոր աբսիդ և միակ դուռը բացվում է աղոթասրահից՝ բեմի անմիջապես առջևից։ Ավանդատան

---

[4] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV веков, Ереван, 1961, стр. 153.

[5] Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը («Լրաբեր», 1968, № 1). „XX Corso di cultura sull'arte Ravennate e Bizantina", Ravenna, 1973.

[6] Աբսիդում պայտաձև կամարի և կիսաշրջանաձև հատակագծի զուգակցումը հանդիպում է Հայաստանում IV դ.։ Կիսաշրջանաձև կամարը նույնպես բնորոշ է վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը և կիրառվել է պայտաձևին զուգահեռ։

արևմտյան պատի վրա արտաքուստ կա կիսաշրջանաձև հատակագծով մի աբսիդ ևս։ Ողջ հուշարձանը, որը բարձրացել է աստիճանաձև որմնախարիսխի վրա, հիմնականում կառուցված է մշակված որձաքարից, կրաշաղախով։ Պատասխանատու հանգույցները՝ որմնամույթերը և զույգ թաղակիր կամարները, պատերի անկյունները, բացվածքների եզրերը իրականացված են մաքուր տաշված բազալտե քարերից (նույն տեխնիկայով և շինանյութերով են կառուցված Տաշիրի սրահավոր մյուս հուշարձանները)։ Եկեղեցին ունի երեք մուտք՝ հյուսիսային, հարավային և արևմտյան պատերում։ Լուսամուտները, ինչպես վաղ միջնադարի հուշարձաններում, բավական լայն են և դեպի ներս քիչ են լայնանում։ Դրանք հատակից զգալի բարձր են և թվով ինը, որոնցից երեքը գտնվում են հարավային, երկուսը՝ հյուսիսային, երկուսը՝ արևելյան ճակատներում։ Չնայած լուսամուտների զգալի բարձրությանը, դրանց կամարները փորված են միակտոր քարի մեջ։ Ավանդատունը լուսավորվում է նաև հարավից, իսկ արևմտյան պատի ճակատոնի տակ տեղադրված են զույգ լուսամուտներ, որոնք իրենց ձևով կրկնում են IV—V դդ. հայ ճարտարապետության այնպիսի հուշարձանների համանման բացվածքները, ինչպիսիք են Լեռնակերտի միանավ եկեղեցին, Ծիծեռնավանքի, Աշտարակի եռանավ բազիլիկաները և այլն։

Նկ. 2. Կուրթանի միանավ եկեղեցին հարավ-արևելքից։

Դռների բացվածքներն ուղղանկյուն են և ծածկվում են վերևից կիսաշրջանաձև մշակված միակտոր քարի հորիզոնական բարավորով։

Հուշարձանի ինտերյերը, զգալի բարձրության շնորհիվ, բավական վեհ տպավորություն է թողնում։ Այն գերազանցում է աղոթասրահի լայնությանը ավելի քան երկու անգամ։ Ինտերյերի վերասլացության տպավորությունը ուժեղանում է նաև լուսամուտների բարձր տեղադրությամբ, որը պայմանավորված է արտաքին սրահի առկայությամբ։ Կուրթանի եկեղեցին վաղ միջնադա-

րի Հայաստանի այն հազվագյուտ միանավ կառուցվածքներից է, որը պահպանել է իր ծածկի նախնական թաղը (վերջինս բանդված է միայն արևմտյան կողմում)։ Աղոթասրահի պատերը ներսից շարված են մաքուր տաշած քարերով։ Թաղակիր կամարները հենվում են պարզ իմպոստների վրա, որոնց կորագիծ վերջավորությունը պսակվում է սալիկով։ Նման լուծում ունեն նաև ավանդատան աբսիդի կամարի խոյակները և որմնակամարների իմպոսաները։ Ավանդատան հյուսիսային պատի շրջանագծի մեջ ներառված հավասարաթև խաչերով քանդակազարդ քարը իր տեղում չէ և այստեղ է ագուցվել վերանորոգման ժամանակ։

Կուրթանի միանավ եկեղեցու արտաքին տեսքը աչքի է ընկնում իր հակիրճ ձևերով և զուսպ դեկորով։ Ինչպես Հայաստանի IV—VII դդ. կառուցվածքներում, այստեղ ևս հարդարանքի միակ տարրերը լուսամուտների և դռների կիսաշրջանաձև պարակալներն ու քիվն են։ Հարավային ու արևմտյան ճակատների լուսամուտների պարակալները մշակված են պայտաձև կամարիկներով և դրանց զուգահեռ գնդիկների շարքով։ Հարավային ճակատի լուսամուտների պարակալներն ունեն նաև գալարաձև քանդակված միջանկյալ մի այլ զարդագոտի։ Կամարիկների պայտաձևությունը խիստ շեշտված է և գրեթե լրիվ շրջանագծի է նման։

Հյուսիսային ճակատի լուսամուտների պսակներից պահպանվել է միայն երկրաչափական զարդաքանդակներով մի քար։ Մուտքերից հարավայինի պարակալի հորինվածքը նման է լուսամուտների պսակներին, իսկ արևմտյանը կամարիկների փոխարեն մշակված է ատամիկներով։ Մուտքերի նման մշակումը տարածված էր վաղ միջնադարյան Հայաստանում (Բագավանի VII դ. գմբեթավոր բազիլիկան, որի հարավային դուռն ունի պայտաձև կամարիկներով մշակված կիսաշրջանաձև պարակալ)։ Արտաքին սրահից պահպանված միակ հետքերը հյուսիսային, արևմտյան և հարավային ճակատների քարե պահունակներն են, որոնք ունեն կիսագլանիկով մշակված բավական պարզ տրամատ։

Կուրթանի, ինչպես հետո կտեսնենք, նաև Տաշիրի մյուս նույնատիպ հուշարձանների կարևոր առանձնահատկություններից է կանոնավոր, դասական ճակտոնի առկայությունը։ Այստեղ՝ արևմտյան ճակատում լրիվ պահպանվել է ճակտոնի հորիզոնական գոտին, իսկ արևելյանում՝ մի փոքր մասը։ Տիմպանով ճակտոնը հելլենիստական ճարտարապետության վերապրուկների արտահայտությունն է Հայաստանի վաղ քրիստոնեական հուշարձաններում[7]։ Բավական հետաքրքիր է ճակտոնի հորիզոնական քիվի և լուսամուտի պարակալի զուգակցումը, երբ քիվի կամարիկների քանդակազարդ գոտին կիսաշրջանաձև պտտվում է լուսամուտի վերևով։

Արևմտյան լուսամուտի այս պարակալը մշակման եղանակով որոշ չափով տարբերվում է մյուս լուսամուտներից՝ այստեղ պայտաձև կամարիկների ծայրերին կից քանդակված են զույգ գնդիկներ։ Նման լուծում ունեն Պտղնիի, Ալամանի, Արթիկի եկեղեցիները, Թալինի Մեծ տաճարը և այլն։

Գյուլագարակի Տորմակ եկեղեցին (նկ. 3) գտնվում է գյուղից մոտ երկու կմ հարավ։ Այն ունի նույն հորինվածքը և գրեթե նույն չափերը, ինչ Կուրթանի

---

[7] В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, стр. 38.

եկեղեցին։ Այս եկեղեցին վատ է պահպանված։ Քանդված են ծածկը, հյուսիսային պատի միջին հատվածը, բեմի աբսիդը, պատերի ստորին մասում և լուսամուտների ու մուտքերի եզրերում պոկված են երեսպատման քարերը։ Աղոթասրահը (5,6×12,9 մ) ղուլգ որմնասյուներով բաժանվում է երեք մասի, որոնց վրա հենվել են թաղակիր կամարները։ Բեմի աբսիդին հարավային կողմից կից է քառակուսի հատակագծով ավանդատունը, որն արևելքից ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով։ Ավանդատունը և նրա արևելյան պատի դրսից կառուցված բաց աբսիդը քանդված են, մնացել են միայն պատերի հիմքերը։ Աղոթասրահի հարավային պատի վրա պահպանվել են ավանդատան խաչվող թաղերով ծածկի հետքերը։ Հարավային պատի միջին հատվածը թեպետ զուրկ է երեսպատման քարերից և տեղ-տեղ քանդված, սակայն բուտորեոտոնի միջուկի վրա պահպանվել են ինչպես լուսամուտի, այնպես էլ կամարա-

Նկ. 3. Գյուլագարակի Տորմակ եկեղեցին հարավ-արևմուտքից։

կապ պարակալ ունեցող դռան հետքերը։ Հյուսիսային պատի միջին մասը լրիվ է քանդված և հնարավոր չէ որոշել, թե եկեղեցին այդ մասում ունեցե՞լ է մուտք կամ լուսամուտ։ Արևմտյան ճակատում մուտքը նույնպես քանդված է, սակայն այստեղ ևս դռան ուղղանկյուն բացվածքն ունեցել է կիսաշրջանաձև պարակալ։ Արևմտյան ճակատի վերևում պահպանվել է մի կարևոր մանրամաս, որը հնարավորություն է տալիս պարզել Տորմակի եկեղեցու արտաքին հարդարանքի նախնական տեսքը։ Դա ճակատոնի հորիզոնական գոտու մի մասն է, որը, ինչպես Կուրթանում, զուգակցված է լուսամուտի պարակալի հետ։ Գոտին զարդարված է բավական խոր փորված և խիստ շեշտված պայտաձև կամարիկների շարքով։ Եկեղեցու դահլիճից 3 մ հեռավորության վրա պահպանվել են սրահի պատի արևմտյան մասը լրիվ, իսկ հարավային և հյուսիսային թևերից՝ 2—3 մ երկարությամբ հատվածներ։ Այս պատը կառուցված է շինարարական նույն տեխնիկայով, միևնույն քարով, ինչ և եկեղեցու դահլիճը։ Սրահն արև-

մըտյան կողմում, եկեղեցու ընդերկայնական առանցքով ունեցել է մուտք, որը նույնպես քանդված է և քարերը պարագծով պոկված։ Սակայն պատի բուտոբետոնի միջուկի վրա պահպանված հետքերը ցույց են տալիս, որ մուտքն եղել է կամարակապ մեծ բացվածքի ձևով, 2,5 մ լայնությամբ (ինչպես Օձունի գըմբեթավոր բազիլիկայում)։ Թե ինչպես է շարունակվել սրահը եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում, այժմ դժվար է ասել։ Պեղումներից հետո միայն կարելի է պարզել սրահի հորինվածքը (հոծ պատեր, թե՞ սյունասրահ և կամ մույթերով կամարաշար)։ Հյուսիսային պատի վրա պահպանվել է քարե մի պահունակ (ցավոք, պահունակի բարձրությամբ պատի երեսպատումը քանդված է և մյուս պահունակների հետքերը չեն երևում)։

Գյուլագարակից մոտ 6 կմ արևելք, Վարդաբլուր և Կուրթան գյուղերի միջև, խճուղու եզրին գտնվում է այս խմբի մյուս հուշարձանը՝ Գոտեվանքը (նկ.

Նկ. 4. Գոտեվանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից։

4)։ Սա իր չափերով ամենափոքրն է (դահլիճի չափերն են ներսից 3,6×6,9 մ)։ Հուշարձանը բավական վնասված է։ Քանդված են ծածկը, հյուսիսային և հարավային պատերի երեսպատման քարերը։ Դահլիճի ինտերյերը մեկ թաղակիր կամարով բաժանվում է երկու հավասար հատվածի (պահպանվել է որմնասյան հետքը հարավային պատում)։ Դահլիճին հարավից կից է ավանդատունը, որի միակ դուռը բացվում է դեպի աղոթասրահ՝ բեմի անմիջապես առջևից։ Ավանդատունն աբսիդ չունի, այն արևելքում ավարտվում է ուղղանկյուն հատակագծով և կամարակապ ծածկով մի խորշով։ Նրա արևմտյան պատի դրսի կողմից կա գմբեթարդով ծածկված կիսաշրջանաձև հատակագծով մի աբսիդ։ Եկեղեցին ունեցել է երկու մուտք՝ հյուսիսից և հարավից։ Երկուսն էլ քանդված են, սակայն նշմարվում է, որ դրանք ևս Տաշիրի նույնատիպ մյուս հուշարձանների նման ունեցել են կամարակապ պարակալով ուղղանկյուն բացվածք։ Ան-

կասկած, հուշարձանը լուսամուտներ է ունեցել ընդերկայնական պատերում, բայց պատերի վերին մասերը քանդված են և լուսամուտների հետքեր չեն երևվում։ Եկեղեցու հարդարանքից պահպանվել է արևմտյան պատում ճակտոնի հորիզոնական դոտու մի քարը միայն, որը բավական է հավաստելու, թե իր հարդարանքով, ինչպես և արտաքին արտահայտչականությամբ Գտեվանքը կրկնում է Տաշիրի վերը նշված հուշարձանների ճարտարապետական ձևերը (քիվը նույնպես մշակված է շրջանագծի հասնող խիստ պայտաձև կամարիկների շարքով)։ Գտեվանքի արևմտյան կողմում, դահլիճից 2,6 մ հեռու մնացել է արտաքին սրահի պատի մի մասը։ Սակայն այստեղ, ի տարբերություն Գյուլագարակի, սրահն արևմուտքից դուռ չի ունեցել։ Սրահը հավանաբար ունեցել է փայտե ծածկ, որովհետև դահլիճի արևմտյան պատի վրա, դրսից կան քարե երեք պահունակներ։



Նկ. 5. Վարդաբլրի Ջգրաշեն եկեղեցին հարավ-արևմուտքից։

Ստեփանավանի շրջանի Հոբարձի գյուղում և Վարդաբլուր գյուղից մոտ 2 կմ հյուսիս կանգուն են միևնույն հորինվածքով երկու հուշարձաններ։ Սակայն եթե Հոբարձիի եկեղեցին XIX դ. հիմնովին վերանորոգվել է, որի ընթացքում զգալի աղավաղվել են նրա ճարտարապետական ձևերը, ապա Ջգրաշենը, թեպետ և կիսավեր, անաղարտ պահպանել է իր հորինվածքը և նույնիսկ, որ շատ կարևոր է, հարդարանքը։ Այս պատճառով Ջգրաշենը հնարավորություն է տալիս վերականգնելու Հոբարձիի եկեղեցու նախնական տեսքը և հատակագիծը։

Ջգրաշենը (նկ. 5) կառուցված է Զորագետի վտակի ափին, բարձրադիր մի հարթակի վրա։ Հուշարձանի պատերը բավական խարխուլ վիճակում պահպանվել են համարյա ողջ բարձրությամբ։ Արևմտյան ճակատը անջատվել է երկայնական պատերից, որոնք իրենց հերթին զգալի վնասված են։ Ողջ պարագծով պտտվում է մեկ-երկու շարքից բաղկացած մի գոտի, որն իրականացված

է դեղնա-կարմրավուն ֆելզիտից։ Երկաստիճան որմնախարիսխի վրա բարձրացող դահլիճն ունի նույն համաչափությունները, ինչ և Տաշիրի մյուս նույնատիպ հուշարձանները՝ այն բավական ձգված է արևելքից արևմուտք և լայնությունը հարաբերում է երկարությանն ինչպես 1։2,4։ Ջգրաշենի հատակագիծն ունի նույն սխեման, ինչ Կուրթանը, Գյուլագարակը, Գտեվանքը, սակայն մի տարբերությամբ՝ այստեղ հյուսիսային կողմին կից ավանդատնից և բաց աբսիդից բացի, հարավային կողմում նույնպես կառուցվել է բաց աբսիդ, որի արևմտյան պատն ընդհանուր է դահլիճի և հյուսիսային ավանդատան (վերջինս ծածկված է խաչվող թաղերով) համապատասխան պատերի հետ։ Այս տարբերությունը ընդգծում է ճարտարապետի ձգտումը՝ հնարավորին չափ համաչափ հորինվածք ստեղծել ընդերկայնական առանցքի շուրջը, հավասարակշռելու այն լարված ու ասիմետրիկ ծավալա-տարածական հորինվածքը, որը կա Գյուլագարակում, Կուրթանում և Գտեվանքում։ Ջգրաշենն ունի երեք մուտք՝ երկայնական պատերում և արևմուտքում։ Թեպետ մուտքերը եզրագծով քանդված են, սակայն երևում է, որ դրանք ունեցել են ուղղանկյուն բացվածքներ, ընդ որում հարավայինը պսակվել է կիսաշրջանաձև պարակալով։ Լուսամուտները քիչ են՝ երկուսը հարավային պատի վրա, մեկը արևմտյանում, իսկ մյուս երկուսը՝ արևելյանում (բեմինը և ավանդատանը)։

Լավ է պահպանվել արևմտյան լուսամուտը, որի կամարակապ վերջավորությունը, ի տարբերություն Կուրթանի, իրականացված է երեք քարից։ Եկեղեցու դահլիճը (5,60×13,17 մ) երկու զույգ որմնամույթերով բաժանված է երեք մասի։ Դահլիճի լայնության և բարձրության հարաբերությունը (ներսում) Տաշիրի մյուս հուշարձանների համեմատ մեծ չէ։ Եթե Կուրթանում և կամ Օձունի միանավ եկեղեցում այն կազմում է 1։2 և ավելին, ապա այստեղ հարաբերությունը հավասար է 1։1,7 (ճիշտ է, եկեղեցու ծածկը չի պահպանվել, սակայն թաղի սկզբից մինչև հատակը 6,6 մ է, հետևաբար, դահլիճի բարձրությունը ներսում եղել է 9,4—9,5 մ)։

Արտաքին պատերում պահպանվել են բազալտից պահունակներ, որոնք տեղադրված են ֆելզիտե շարվածքի գոտում։ Դրանք ունեն տարբեր տրամատ և մեծ մասամբ մշակված են կիսագլանիկով ու սալիկով։ Սակայն կան նաև կենդանակերպ քանդակներով պահունակներ. հյուսիսային պատի պահունակներից մեկի վրա, օրինակ, մեծ վարպետությամբ քանդակված է խոյի գլուխ, մյուսի վրա՝ ոչխարի ոճավորված գլուխ, իսկ հյուսիսային պատին պատկերված է եղջերու։ Պահունակների այսպիսի քանդակազարդումը բացառիկ է վաղ միջնադարի Հայաստանի հուշարձաններում։ Ընդհանրապես Ջգրաշենի հարդարանքից պահպանված բեկորները մեծ հետաքրքրություն են ներկայացնում V—VII դդ. հայ ճարտարապետական զարդաքանդակների զարգացման պատմության համար։ Հարավային պատի արևելյան կողմի լուսամուտի պարակալն ունի բուսական մոտիվներով քանդակ՝ խաղողի որթի գալարների մեջ գտնվող եռաթերթ և բազմաթերթ տերևներով։ Այն ոճավորված է, կատարված փոքր խորությամբ և զուրկ է VII դ. համանման քանդակներին հատուկ պլաստիկայից։ Սակայն, անկախ այս բոլորից, պարակալը զգալի աշխուժացնում է կառուցվածքի հարավային ճակատը, որովհետև տվյալ կողմնորոշման դեպքում պատի հարթությունից քիչ դուրս ցցված քանդակները նույնպես ստեղծում են լույս ու ստվերի ուժեղ խաղ։ Արևմտյան ճակատի հարդարանքը տարբերվում է Կուրթանի և Գյուլագարակի եկեղեցիների հարդարանքից։ Այստեղ ամենա-

կարևորն այն է, որ ճակտոնի հորիզոնական գոտին ոչ թե արևմտյան լուսամուտի պարակալի հետ մեկ ամբողջություն է կազմում, այլ լուծված է առանձին՝ այն ընդհատվում է պարակալի կիսաշրջանաձև մասով։ Ճակտոնի տիմպանի այսպիսի լուծումն, իր արտահայտչականությամբ, զգալի զիշում է Կուրթանի ու Գյուլագարակի եկեղեցիների ճակտոններին։ Արևմտյան ճակատի գեղարվեստական մշակումը կորցրել է իր ամբողջականությունը, հստակությունը և Տաշիրի մյուս հուշարձաններում կիրառված հնարքից հրաժարվելը այստեղ պետք է համարել կառուցողի ստեղծագործական անհաջողությունը։ Թե՛ լուսամուտի պարակալը և թե՛ ճակտոնի քիվը մշակված են պայտաձև կամարիկներով։ Սակայն Ջգրաշենում Տաշիրի տիպարային այս մոտիվը ունի մի քիչ այլ ձև։ Քիվի կամարիկների միացման անկյուններում քանդակված են եռանկյուններ, իսկ պարակալի ձվաձև ուրվագիծ ունեցող կամարիկների շարքին զուգահեռ, վերևից կա նշտարաձև տերևների քանդակներով մշակված մի երկրորդ գոտի ևս։ Նշտարաձև տերևներ հանդիպում են Հայաստանի V—VII դդ. հուշարձաններում, որոնցով զարդարված են լուսամուտների բարավորները և նույնիսկ խոյակներ (Գառնիի, Ագարակի, Անիի միանավ եկեղեցիները, Արուճի տաճարը և այլն)։

Հոբարձիի եկեղեցին իր հորինվածքով կրկնում է Ջգրաշենին։ Միայն այստեղ ավանդատունը շինությանը ոչ թե կից է հյուսիսից, այլ հարավից։ XIX դ., վերակառուցման ընթացքում, քանդվել է ավանդատունը և նրա արևմտյան պատի բաց աբսիդը, որոնց հետքերն են երևում միայն գետնի երեսին։ Փակվել է արևմտյան մուտքը, վերաշարվել պատերի մեծ մասը, այժմյան լուսամուտները նույնպես նախնականը չեն։ Հոբարձիի եկեղեցին ավելի կարճ է (համապատասխանաբար 18,10 և 16,60 մ)։ Այդ պատճառով աղոթասրահը, որը զույգ թաղակիր կամարներով նույնպես բաժանվում է երեք մասի, ավելի քիչ է ձգված։ Մուտքերը ևս երեքն են՝ երկայնական պատերում և արևմուտքում։ Ավանդատունը հաղորդակցվել է դահլիճին բեմի առջևից բացվող դռնով։ Թեպետ նշմարվում են ավանդատան պատերի հիմքերը միայն, սակայն պարզ է, որ այն ծածկվել է գլանաձև թաղով, քանի որ եկեղեցու հարավային պատում պահպանվել է այդ թաղի առաջին շարքը։ Արտաքին սրահից մնացել են եկեղեցու հյուսիսային և հարավային պատերի պահունակները և նրանց հետ միևնույն բարձրության վրա գտնվող երեք քառորդանի խոյակ։ Պահպանվել է նաև հյուսիսային դռան շքամուտքը։ Դռան ուղղանկյունաձև բացվածքը ավարտվում է վերևից կիսաշրջանաձև ուրվագիծ ունեցող բարավորով։ Մուտքը ձևավորված է ճակտոնով ավարտվող սյունազարդ պորտալով, որի կիսասյուների խոյակները մշակված են պայտաձև կամարիկներով։ Հուշարձանի ներսում գտնվում է հարդարանքի մի բեկոր ևս՝ լուսամուտի պարակալի հորիզոնական հատվածը։ Նրա վրա քանդակված է շրջանագծի մեջ ներգծված երեք հավասարաձև խաչ։ Քանդակը բավական նուրբ է և իր կատարման ոճով նման է Կուրթանի հյուսիսային ճակատի լուսամուտներից մեկի պարակալին։

Պատմական Տաշիրի այս խմբի հուշարձանների շարքին է պատկանում նաև Ստեփանավանի շրջանի Սվերդլով գյուղի ս. Գևորգ եկեղեցին (նկ. 6), որը գտնվում է գյուղի հյուսիսային եզրի բարձրագիր վայրում և նույնատիպ հուշարձաններից ամենամեծն է (երկարությունն է 21,61 մ)։ Անցյալ դարում այս հուշարձանը հիմնովին վերանորոգվել է։ Հարավային և արևմտյան պատերը երեսպատվել են սրբատաշ բազալտով, վերաշարվել են մյուս պատերի

զգալի մասերը, քիվը և կղմինդրե տանիքը նույնպես նորոգման արդյունք են։ Փոխվել են նաև լուսամուտները, որոնք երկայնական պատերում լայնացել են և դարձել տարբեր չափերի։ Վերակառուցվել են ավանդատները. դա պարզորոշ երևում է հյուսիսային ավանդատան արևմտյան պատից, որտեղ նախնական արտաքին աբսիդը կիսով չափ մնացել է վերակառուցված արևմտյան պատի մեջ։ XIX դ. հարավային ճակատին կից, մուտքի դիմաց, կառուցվել է երկաստիճան զանգակատուն։



Նկ. 6. Սվերդլովի ս. Գեորգ եկեղեցու ընդհանուր տեսքը։

Հուշարձանի հարավային և արևմտյան ճակատներում պահպանված բազմաստիճան որմնախարիսխը վկայում է, որ վերանորոգման ժամանակ շենքի հիմնական ծավալը և հատակագծային հորինվածքը չեն փոխվել։ Ս. Գևորգը, պատկանելով Տաշիրի սրահավոր հուշարձանների տիպաբանական խմբին, իր ընդհանուր հորինվածքով միաժամանակ տարբերվում է նրանցից։ Այստեղ ողջ կառուցվածքը սիմետրիկ է ընդերկայնական առանցքի նկատմամբ (ավանդատներ կան բեմի երկու կողմերում)։ Ստացվել է հավասարակշռված ծավալա-տարածական հորինվածք, որը կազմավորվել է արևելք-արևմուտք առանցքի շուրջը, ինչպես բազիլիկաներում։ Համաչափություններով նույնպես այն նման է բազիլիկ կառուցվածքներին՝ դահլիճի լայնության և երկարության հարաբերությունն արդեն հավասար է 1։3 (Տաշիրի մյուս հուշարձաններում այն տատանվում է 1,9-ից մինչև 1։2,4)։ Նեղ ու ձգված դահլիճը չորս զույգ թաղակիր կամարներով և որմնամույթերով բաժանվում է հինգ հատվածի, որը ինտերյերում որոշակի ռիթմ է ստեղծում։ Ազոթասրահը հիշեցնում է եռանավ բազիլիկաների միջին նավը նաև իր զգալի բարձրությամբ։

Ավանդատները միևնույն լայնության են, բայց տարբեր երկարությամբ, որը վերակառուցման հետևանք է։ Այդ պատճառով վերացել են նաև արտա-

քին աբսիդները, որոնցից միայն հյուսիսայինի մի մասն է տեղում պահպանվել։ Ավանդատները թաղածածկ են և արևելքից ավարտվում են աբսիդով։ Հյուսիսայինի աբսիդն ունի կիսաշրջանաձև հատակագիծ և պայտաձև կամար, իսկ հարավայինի թե՛ հատակագիծը, թե՛ կամարը շեշտված պայտաձև են։

Հուշարձանի հարդարանքից համարյա ոչինչ չի պահպանվել։ Ինտերյերն ամբողջությամբ սվաղված է։ Թաղակիր կամարների իմպոստները պարզ են, այդ ժամանակաշրջանին բնորոշ սալիկավոր, որը կորագիծ վերջավորությամբ ձուլվում է որմնամույթին։ Բեմի լուսամուտի պարակալը նախնականը չէ։ Դրոներն ունեցել են շքամուտքեր, որոնցից արևմտյանի հետքերն են պահպանվել, հյուսիսայինի կիսասյուները, իսկ հարավայինի զույգ կիսասյուները՝ վրան հանգչող կամարով։



Նկ. 7. Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները։

Տաշիրի այս հուշարձաններն իրենց հատակագծային-ծավալային հորինվածքով ու մանրամասներով միևնույն ժամանակաշրջանի (VI դ.) և միևնույն ճարտարապետական դպրոցի արդյունք են (նկ. 7)։

Արտաքին սրահով միանավ հուշարձաններ հանդիպում են նաև պատմական Այրարատում և Սյունիքում։ Առավել բնորոշ և գրականության մեջ հայտնի սյունասրահով միանավ կառուցվածքը Թանահատի եկեղեցին է, որը գրտ-

նրվում է Սիսիանի շրջանի Արևիս գյուղից հյուսիս, լեռան լանջի եռանկյունաձև հարթակի վրա։ Այն ավերակ է, պահպանվել են արևմտյան և հյուսիսային պատերը, հարավային պատի արևմտյան հատվածը, ավանդատունը և բեմի կամարը։ Աղոթասրահը (6,70×13,5 մ) ավարտվում է խիստ շեշտված պայտաձև հատակագծով և ատամաշարով զարդարված կամարավոր աբսիդով։ Վերջինից դուռ է բացվում դեպի հարավից կից, սեղանաձև հատակագծով թաղածածկ ավանդատունը, որը բավական մոտ տեղադրված լինելով աբսիդին, իր թաղի վրա է կրում հարավային պատի մի մասը։ Ավանդատունը կառուցված լինելով դահլիճի հետ, նրա օրգանական ամբողջությունն է կազմում, որը պարզորոշ երևում է շինության արևելյան ճակատում։ Սյունասրահից մընացել են սյուների բները և խոյակները։ Եկեղեցու միակ պահպանված մուտքը հարավից է՝ սրահի միջից։ Այս կողմից կան նաև լուսամուտի հետքեր։ Արևմտյան ճակատը լրիվ փլված է և դժվար է ասել՝ այստեղից մուտք եղել է, թե ոչ։ Պահպանվել է քիվի ատամնաշարավոր անկյունային բեկորը։ Քիվը, հնաոճ քանդակներով մշակված սյունասրահի խոյակները և բեմի կամարի իմպոստները, ինչպես և ողջ հորինվածքը վկայում են հուշարձանի Հայաստանում քրիստոնեության տարածման առաջին տարիներին պատկանելը[8]։ Մասնագիտական գրականության մեջ Թանահատը թվագրվում է V—VI դդ.։ Սակայն նրա կառուցման թվականը, ըստ շինարարական արձանագրության (որից այժմ բեկորներ են միայն տեղում պահպանվել), որոշակի նշում է Ստեփանոս Օրբելյանը. «Բայց դտաք յիւրոց արձանագրութեանցն եթէ 400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զհայ թուականն, յիշխանացն Սիւնեաց յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի»[9]։ Օրբելյանի այս տեղեկությունը տարակուսանք է առաջացրել հետազոտողների մոտ, որովհետև Թանահատի եկեղեցու կառուցումը 151 թ.՝ մինչև քրիստոնեության տարածումը Հայաստանում, հավանական չէ։ Սակայն Ալիշանը լուծել է այդ առեղծվածը։ Նա գրում է, որ Օրբելյանի տեքստում արտադրությունների ժամանակ սխալ է սպրդել և պատմիչի մոտ ոչ թե Ն (400) է եղել, այլ իր գրելաձևով վերջինիս նման միակ տառը՝ Կ(60), որի դեպքում միայն Թանահատը կարող է կառուցված լինել Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց (301) մինչև «հայոց թվականը» (551) ընկած ժամանակամիջոցում[10]։ Եվ իրոք, Թանահատի թվագրումը 491 թ. միանգամայն համապատասխանում է նրա ճարտարապետական առանձնահատկություններին։

Ենթադրվում է, որ Հայաստանի IV—V դդ. հուշարձաններից արտաքին սրահ ունեցել են Գառնիի, Եղվարդի, Կառնուտի, Էջմիածնի միանավ եկեղեցիները[11]։ Ըստ Վ. Հարությունյանի և Գ. Քոչոյանի հյուսիսային կողմից կամարասրահ է ունեցել նաև Դվինի Ցիզտրուգիտի վկայարանը (553—555 թթ.)[12]։

---

[8] В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества. М., 1951, стр. 38

[9] Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1912, էջ 160։

[10] Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 251։

[11] A. Khatchatrian, L'architecture Armenienne du IV au VI siecle, Paris, 1971, p. 36—43.

[12] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 108, Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձաններ, Երևան, 1950, էջ 81։

Բաց աբսիդներով ավարտվող արտաքին սրահ ունեն V դ. եռանավ բազիլիկաներից Երերույքը, Դվինը և Տեկորի գմբեթավոր բազիլիկան։ Վերջին երկուսը սյունասրահով շրջապատված են եղել երեք կողմից, իսկ Երերույքն արևմուտքից ունի նարտեքս։ Աբսիդավոր այս սրահները ծառայել են մի քանի նպատակների համար։ Խոշոր տոների, հանդիսությունների ժամանակ դրանք եղել են լրացուցիչ, օժանդակ տարածություն՝ հավաքված մեծ ամբոխին պատսպարելու համար[13]։ Ենթադրվում է, որ ինչպես սիրիական եկեղեցիներում, Հայաստանում ևս սովորական օրերին ծիսակատարությունների համար օգտագործվել են միայն սրահները[14]։ Գոյություն ունի նաև այն տեսակետը, որ արտաքին սյունասրահները վաղ միջնադարում նախատեսված են եղել ապաշխարողների համար[15]։ Եթե նկատի ունենանք, որ հայ եկեղեցին, որպես Նիկիայի տիեզերական առաջին ժողովի (325 թ.) մասնակից, պետք է ընդուներ բոլոր եկեղեցիների համար պարտադիր ապաշխարողների վերաբերյալ օրենքը, ապա Հայաստանում արտաքին սյունասրահների կառուցման անհրաժեշտությունը պետք է երևան եկած լինի IV դ. երկրորդ քառորդում[16]։ Արտաքին սրահները Հայաստանում համեմատաբար լայն տարածում ստացան V դ. և VI դ. առաջին կեսում։ Իսկ նրանց կառուցման անհրաժեշտությունը, ըստ երևույթին, վերացավ VI դ. վերջին քառորդում[17]։

Ինչպես տեսանք, վաղ միջնադարյան Հայաստանում արտաքին սրահով միանավ կառուցվածքները բավական տարածված են եղել։ Հնարավոր է, որ վերը նշված հուշարձաններով չի սպառվում նրանց քանակը։ Արտաքին սրահով միանավ եկեղեցիներ տարածված էին նաև հյուսիսային Սիրիայում, ուր վաղ միջնադարում երևան են եկել սյունասրահով շրջապատված ընդլայնական տիպի միանավ կառուցվածքներ[18]։ Ըստ Ստրժիգովսկու, երկայնական տիպի (հելլենիստական) միանավ եկեղեցիներից լայնականի (արևելյան) անցումը տեղի է ունեցել V—VI դդ., ընդ որում այդ տիպի հայ ճարտարապետության հուշարձաններին ծանոթ չլինելով (այն ժամանակ դեռ հայտնի չէր և Թանահատը), նա գտնում է, որ Հայաստանում գոյություն չունի անցման միջանկյալ աստիճան[19]։ Սակայն Տաշիրի միանավ հուշարձանները հենց այդ պակաս օղակներն են, որ լրացնում են ճարտարապետական այս հետաքրքրքրական տիպի զարգացման պատմությունը։ Միևնույն ժամանակ դրանք այն հուշարձաններն են, որոնցում բացահայտ երևում է անցումը Հայաստանի IV—V դդ. ճարտարապետական ձևերից դեպի VII դ. «դասական» ձևերը։ Հենց սրանում է Տաշիրի արտաքին սրահավոր կառուցվածքների կարևոր նշանակությունը հայ ճարտարապետության պատմության համար։

---

13 Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 394։

14 Ստրժիգովսկի, էջ 859։

15 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 95։

16 Ալեքսանդր Սահինյան, Քասալի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 120։

17 Նույն տեղում։

18 Georges Tchalenko, Village antiques de la Syrie du Nord, Paris, 1953, t. I, pl. XIII.

19 Ստրժիգովսկի, էջ 865։

ТАШИРСКИЕ ОДНОНЕФНЫЕ ПАМЯТНИКИ С ГАЛЕРЕЕЙ

М. М. АСРАТЯН

Резюме

В 1973 г. в Степанаванском и Туманянском районах был обмерен и изучен ряд неизвестных в научной литературе памятников архитектуры Армении раннего средневековья. Однонефные церкви с галереей Цираванор Цахкаванк Одзуна, Гтеванк, Куртан, Тормак Гюлагарака, Обардзи, Джграшен Вардаблура, св. Геворк села Свердлова, благодаря оригинальной интерпретации этой известной композиции и самобытному декору, имеют важное значение в истории армянской архитектуры. Сравнительный анализ с однотипными сооружениями Армении и соседних с ней стран позволяет датировать новоявленные памятники исторического Ташира первой половиной VI в.